ՌԵՍՏՈՐԱՆ

Նորաբաց ռեստորանում կարելի է գնել հավի.

- 1 հատ ոտք + 1 հատ թև;
- 1 հատ ոտք + 1 հատ ազդր;
- 1 հատ ազդր;
- 2 հատ թև;
- 3 հատ թև:

Ձեր խնդիրն է գրել ծրագիր, որը կպարզի հնարավոր է արդյոք գնել ճիշտ k հատ թև, n հատ ոտք և b հատ ազդր:

Մուտքային տվյալներ.

Մուտքի միակ տողում տրված են k, n և b ամբողջ թվերը, որոնք չեն գերազանցում 10^4-ը:

Ելքային տվյալներ.

Ելքում պետք է արտածել YES, եթե հնարավոր է նշված քանակի գնում իրականացնել և NO-հակառակ դեպքում:

Օրինակներ.

N	stdin	stdout
1	1 1 1	YES
2	1 3 1	NO